## ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ 1920 Թ. ԶԵԿՈՒՅԱԳՐԵՐԸ

*Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվում բազմաթիվ արժեքավոր փաստաթղթերի հետ պահվում են Հայաստանի Հանրապետության կառավարության հրավերով 1919 թ. հոկտեմբերին Հայաստան եկած ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի (1878—1936 թթ.) կազմած և ստորագրած մի շարք վավերագրեր։*

*Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը գտնվում էր ծանրագույն վիճակում։ Զգացվում էր մասնագետների մեծ պակաս։ Երևան տեղափոխվելու առաջին իսկ օրերից Թամանյանը ձեռնամուխ է լինում բուռն գործունեության։ Նշանակվելով Հանրապետության գլխավոր ճարտարապետ, նա գլխավորում է Հայկական տեխնիկական ընկերությունը, դառնում Հնությունների պահպանության կոմիտեի անդամ։*

*1920 թ. գարնան, ամռան, աշնան ամիսներին ճարտարապետը ղեկավարում է կառավարական հիմնարկությունների համար նոր շենքերի կառուցման շինարարական հանձնաժողովը։ Ստորև ներկայացվող առաջին փաստաթուղթը Թամանյանի զեկույցն է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին, որտեղ մանրամասնորեն նկարագրվում են կառավարական նոր կառուցվող շենքի հնարավորությունները։*

*Հանրապետության խոշոր քաղաքներում բնակչությանը բնակարաններով ապահովելու նպատակով նույն թվականի հոկտեմբերին Թամանյանը պատրաստում է նաև նոր կառուցվելիք բնակելի տների շինարարության համար արտոնությունների օրենքի նախագիծ, որը պետք է ապահովեր հայկական ավանդական ճարտարապետական արվեստի գոյը, զուգակցելով այն եվրոպական ճարտարապետությանը։ Ներկայացվող երկրորդ փաստաթուղթը սույն օրենքի նախագիծն է, որին կից Թամանյանի բացատրագիրն է օրենքի կիրառման անհրաժեշտության մասին։*

*Հրապարակվող փաստաթղթերը ձեռագիր են, բնագիր և պահվում են Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի ֆոնդում (Ֆ. 199, ց. 1, գ. 195)։*

*Օ. Ս. ԲԱԼԻԿՅԱՆ*
*Կ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ*

— 1 —

### Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին Զեկույց պետական բարձր հիմնարկություններ նոր կառուցվող շենքում տեղավորելու մասին*

*Սեպտեմբերի 25, 1920 թ.*

*Նոր կառուցվող շենքում պետական հիմնարկությունց բնակարաններ կարող են հատկացվիլ հետևյալ կարգով.*

*1. Շենքի կենտրոնում, 1-ին և 2-րդ հարկերում կարելի կլինի 22 սենյակից բաղկացած մի բնակարան յուր մուտքերով՝ գլխավոր դռնից (Աբովյան փողոցից) և գլխավոր սանդուղքներով, հատկացնել Պառլամենտին։ Գլխավոր սանդուղքի մոտ կա 2 սենյակ (1-ին հարկում), որ կարող են վերնազգեստների համար իբրև զգեստարան ծառայիլ. կա ևս մի ավելորդ սենյակ կիսաներքնատանը։*

*2-րդ հարկում կարող են տեղավորվիլ Պառլամենտի նիստերի դահլիճը, նախագահի ընդունարանը և առանձնասենյակը, նախագահության (պրեզիդիումի) անդամների սենյակը, դիվանը և ֆրակցիաների մի մասը։ 1-ին հարկում կարող են տեղավորվիլ ֆրակցիաների մի մասը, հանձնաժողովները,*

* Վերնագիրը փաստաթղթինն է։

ընթերցարանը (  )** սենյակը և զգեստարանները։ Կիսաներքնատանը գտնվում է մի ընդարձակ սեղանատուն իր խոհանոցով։ Պառլամենտին տրամադրելի բնակարանի ընդհանուր տարածությունը հավասար է 557,7 քառ. սաժ., ըստ որում՝

2-րդ հարկում բնակարանը բռնում է 179,3 ք. ս. տարածություն,
միջանցքները՝ 72,8
1-ին հարկում՝ 145,8
միջանցքները՝ 57,8
կիսաներքնատունը՝ 102,0

ընդամենը՝ 557,7 ք. ս. տարածություն

Պառլամենտի ներկայիս ունեցած բնակարանի տարածությունը 206 ք. ս.

2. Պառլամենտի նիստերի դահլիճի աջ կողմում, 2-րդ հարկում կա 4 սենյակից բաղկացած մի բնակարան, մասամբ դեպի Աբովյան փողոցը, մասամբ էլ դեպի բակը նայող, որպիսին կարելի է հատկացնել նախարարների խորհրդին։ Այդ բնակարանը բաղկանում է Նախարարների խորհրդի նախագահի առանձնասենյակից, որը կարող է ծառայել նաև Նախարարների խորհրդի նիստերին, խորհրդի գործերի վարիչի առանձնասենյակից և դիվանից երկու միջանցքներով (միջանցքները կարող են օգտագործվել նաև իբրև դիվանին օժանդակող սենյակներ)։

Այդ բնակարանի ընդհանուր տարածությունը=60 ք. ս.։

Նախարարների խորհրդի ներկայիս ունեցած բնակարանի տարածությունը կազմում է 32 ք. ս.։

Նախարարների խորհրդին հատկացվելիք բնակարանը մուտք ունի գլխավոր դռնից Պառլամենտի հետ միասին։

3. Նախարարների խորհրդի բնակարանին կից կողմնակի շենքում, որ դուրս է գալիս Զավարյան փողոցի վրա, կարող է տեղավորվել Արտաքին գործոց նախարարությունը։

Արտաքին գործոց նախարարությանը հատկացվելիք բնակարանի ընդհանուր տարածությունը հավասար է 94 ք. ս., որից սենյակները՝ 64 ք. ս., իսկ միջանցքը՝ 30 ք. ս., ըստ որում, միջանցքը (լայն և լույս) կարող է օգտագործվել դիվանի կարիքների համար, նաև դիվան եկողների համար իբրև ընդունարան (սպասելու տեղ)։ Նախարարության բնակարանը բաղկանում է հետևյալ սենյակներից՝ նախարարի ընդունարանից, առանձնասենյակից, նախարարի օգնականի սենյակից, կոնսուլների սենյակից, դիվանից, դիվանապետի առանձնասենյակից ու ֆինանսական բաժնի և գաղտնի գործերի առանձնասենյակից։

Նախարարության մուտքը հնարավոր է գլխավոր դռնից, նաև Զավարյան փողոցի դռնից։

Նախարարության ներկայիս բնակարանի տարածությունը հավասար է 60 ք. ս.։

4. Իսկ և իսկ նշարագրված բնակարանի պես մի բնակարան էլ կա նույն շենքի առաջին հարկում, որպիսին կարելի է հատկացնել Ներքին գործոց և կամ Հաղորդակցության նախարարությանը։

Հիշյալ նախարարությունների ներկայումս բռնած բնակարանների տարածությունները առաջարկած բնակարանի տարածությունից անհամեմատ փոքր են։

5. Արտաքին գործոց նախարարության հետևում կողմնակի շենքի (ֆլիգել) 2-րդ հարկում, որ նույնպես նայում է դեպի Զավարյան փողոց, կարող է տեղավորվել Գյուղատնտեսության նախարարությունը (կամ մեկ ուրիշը)։

Այդ բնակարանի մուտքը Զավարյան փողոցի գլխավոր դռնից է և սանդուղքով։ Բնակարանը բաղկանում է 18 սենյակից, բացի նախասենյակից և

** Բառն անընթեռնելի է։

միջանցքներից, և ընդհանուր տարածություն ունի 101 ք. ս. (սենյակները՝ 85,4 ք. ս., միջանցքները՝ 16,2 ք. ս.)։ Նախարարության ներկայիս բնակարանի տարածությունը հավասար է (  )*** ք. ս.։

6. 2-րդ հարկի ձախակողմյան շենքի վերջում Արամի փողոցին նայող առանձին բնակարանը կարելի է հատկացնել Ֆինանսների և կամ Խնամատարության ու վերաշինության նախարարությանը։ Այդ բնակարանը բաղկանում է 11 սենյակից և 3 միջանցքից և կարող է ունենալ իր առանձին մուտքը Արամի փողոցից, նաև գլխավոր դռնից։ Ընդհանուր տարածությունը հավասար է 93 ք. ս.։

Ֆինանսների նախարարության ներկա բնակարանը (առանց գանձարանի, ակցիզային, հարկային, վարկային և մաքսային բաժանմունքների) կազմում է 93 ք. ս.։

7. Ձախակողմյան շենքի 1-ին հարկում, որ նայում է Արամի փողոցին, Պառլամենտի շենքի հետևում կարելի է մոտավորապես ներքին գործոց նախարարությանը հատկացվելիք բնակարանի պես մեկը տրամադրել Արդարադատության նախարարությանը և կամ մեկ ուրիշին։ Այդ բնակարանը կբաղկանա 8 սենյակից և ընդհանուր միջանցքից, որը կարող է դիվանի համար օժանդակող սենյակի տեղ ծառայել։ Մուտքը Աբովյան փողոցի դռնից է (կարող է և գլխավոր դռնից լինել)։

Ընդհանուր տարածությունը հավասար է 88,5 ք. ս.։ Նախագահության ներկայիս բնակարանի տարածությունը հավասար է 30 ք. ս.։

8. 1-ին հարկում ձախակողմյան շենքի վերջին կա մի բնակարան ընդարձակ դահլիճներով, որպիսին կարելի է հատկացնել պետական գրադարանին։ Այդ բնակարանը բացի երկու ընդարձակ դահլիճներից, ունի մի շարք փոքր սենյակներ, որոնք կարող են օգտագործվել դիվանի և առանձնասենյակների համար։ Տարածությունը=93 ք. ս.։

Բացի 1-ին հարկում եղած այդ բնակարանից, գրադարանին կարելի է տրամադրել նաև մի ընդարձակ տեղ կիսաներքնատանը, տարածությամբ 69 ք. ս.՝ գրքերը կարգավորելու, կազմելու (կազմատան) և գրադարանի ծառայի համար։

Այս բնակարանը կարելի է տրամադրել նաև նախարարություններից մեկին, օրինակ, Խնամատարության, վերաշինության կամ Հաղորդակցության։

Այդ դեպքում պետական գրադարանը կարող է տեղավորվել կամ պետական բանկի և կամ արքունական պալատի շենքում։

9. Առանձին երկհարկանի շենքը, որ դուրս է գալիս Ազատամարտի փողոցը, իր ներքնահարկով, բաղկացած է 6 սենյակից՝ տարածությամբ 46 ք. ս., կարող է տրամադրվել Պետական վերահսկողությանը։

10. Գյուղատնտեսության նախարարության բնակարանի տակին (կիսաներքնատանը) կարող են տեղավորվել հեռագրական գործակալությունը և լրատու բյուրոն։ Այդ բնակարանը ունի իր առանձին մուտքը Զավարյան փողոցից և բաղկացած է 5 սենյակից, տարածությամբ 27 ք. ս.։

11. Կողմնակի շենքի ընդարձակ կիսաներքնատանը, որ դուրս է գալիս Արամի փողոցի վրա, կարող է տեղավորվել Պառլամենտի ճաշարանը իր սեղանատնով, բուֆետով և խոհանոցով, տարածությամբ 102 ք. ս.։ Այդ բնակարանը հաղորդակցվում է 1-ին և 2-րդ հարկերի հետ առանձին սանդուղքի միջոցով։

12. Զավարյանի փողոց դուրս եկող աջակողմյան շենքի կիսաներքնատանը կարող են տեղավորվել հեռախոսային և հեռագրային կայարանները, ընդհանուր էքսպեդիցիան և արխիվները։

Պառլամենտը և նախարարությունները նոր շենքը փոխադրվելու հետ կապված է ազատվող բնակարանները պետական մյուս հիմնարկությանց բաշխելու հարցը։

*** Փաստաթղթում թիվը բաց է թողնված։

1. Զորական նախարարության, որ խիստ նեղված է իր արդի բնակարանում, հարկավոր է հատկացնել Նախարարների խորհրդի, Արտաքին և Ներքին նախարարությանց ներկայումս բռնած բնակարանը, թողնելով նրա տրամադրության տակ նաև իր հին բնակարանը։

Այդ դեպքում Զորական նախարարությունը հնարավորություն կունենա աղատ տեղավորվել և իր շուրջը իրեն մոտիկ տեղավորել զորական բոլոր բարձր հիմնարկությունները։

2. Հանրապետական փողոցում Գյուղատնտեսության նախարարության աղատած բնակարանում հարմարությամբ կարող է տեղավորվել ազգագրական թանգարանը, որը բոլորովին բնակարան չունի։ Թվում է ինձ, որ սկզբնական շրջանում նույն շենքում կարելի է տեղավորել նաև պետական գրադարանը, որպիսով հնարավոր կլինի նոր շենքում մի նախարարությամբ ավելի տեղավորվել։

3. Հաղորդակցության, Խնամատարության և վերաշինության նախարարության, նաև Համբարակային վարչության և զորքերին բնակարաններ մատակարարող վարչության ներկայիս բնակարանները կարող են օգտագործվել կարիք զգացող նահանգապետի դիվանի, Տեղավարական վարչության, Հնության և արվեստի հուշարձանների պահպանության պետական կոմիտեի համար, որոնք բոլորովին բնակարան չունին։

4. Պառլամենտի արդի բնակարանը պիտի զիջվի թատրոնին և երաժշտական դպրոցին։

Գլխավոր ճարտարապետ, ակադեմիկոս Ա. Թամանյան

— 2 —

## Նախագիծ
## Օրենք նոր կառուցվող տների արտոնության մասին*

Հոկտեմբերի 28, 1920 թ.

Սույն օրենքը հրատարակվելուց հետո Երևանում, Ալեքսանդրապոլում և Ղարսում նոր կառուցվող շենքերը թե ամբողջությամբ և թե իրենց մասերով բոլորովին ազատ են բռնագրավումներից կառավարության քաղաքային ինքնավարության կողմից. աղատ են նաև պետական քաղաքային հարկերի կես մասից։

Նոր տները կառուցվելու են հետևյալ հիմունքներով.

1. Բոլոր նոր կառուցվելիք շենքերը նախ ցուցակագրվելու են և ապա կառուցվելու կառավարության կողմից հաստատված նախագծով։ Առանց հաստատված նախագծերի, նոր շենքեր կառուցելը բոլորովին արգելվում է։

2. Կառուցվելիք նոր շենքերի նախագծերը ներկայացվում են ի քննություն և հաստատություն կառավարության կողմից լիազորված Խնամատարության և վերաշինության նախարարության գլխավոր ճարտարապետին, որը իր հաստատած նախագծերը ներկայացնում է Ներքին գործոց պ-ն Նախարարին ցուցակ մուծելու՝ բռնագրավումներից և հարկերի կես մասից աղատելու համար։

3. Ի հաստատումն ներկայացվող նախագծերը պիտի պարունակեն հետևյալ գծագրերը.

ա) կառուցվող շենքի և նրա մյուս մասերի հատակագիծ մակարդակը 1/2 դմ=1 սաժ. մասշտաբով

բ) Շենքի դիմագիծը (ֆասադը) և հատվածները՝ 1 դմ=1 սաժ. մասշտաբով

գ) Հողամասի ընդհանուր հատակագիծը գոյություն ունեցող և կառուցվելիք շենքերով 1 դմ=5 սաժ. մասշտաբով

* Վերնագիրը փաստաթղթինն է։

Մանոթություն. բազմահարկ շենքեր կառուցելիս ներկայացվում են բոլոր հարկերի հատակագծերը, մակարդակները և հատվածները, նշանակելով սանդուղքները.

Գծագրերը ներկայացվում են երկօրինակ։

4. Նոր կառուցվող շենքերը կարող են լինել 3 հարկից ոչ ավելի (ներքնահարկը հարկերի հաշվում չէ), ներքնահարկում բնակչություն չէ թույլատրվում։ Շենքերի բարձրությունը մինչև տանիքի (կաուրի) սկիզբը (մինչև կորնիզի վերին գիծը) լինելու է ոչ ավելի, քան այն փողոցի լայնությունը, որի վրա նոքա շինվում են։

Մանոթություն. Երկու փողոցների անկյունում կառուցվող շենքերի բարձրությունը որոշվում է ավելի լայն փողոցի հարաբերությամբ։

5. Նոր կառուցվող շենքերը, մինչ նոր օրենքների հրատարակումը, բավարարելու են գլխավոր ճարտարապետի պահանջներին սանիտարական, տեխնիկական և էսթետիկական տեսակետներով։ Անկախ այս բոլորից, նոր կառուցվածքները բավարարելու են նաև Ռուսաստանի շինարարական օրենսդրության պահանջներին։

6. Բոլոր նոր կառուցվող շենքերը կատարվելու են միմիայն իրավասու ճարտարապետների տեխնիկական հսկողությամբ և պատասխանատվությամբ։ Շենքերը կառուցող ճարտարապետներին հրավիրում են իրենք՝ սեփականատերերը։

7. Խնամատարության և վերաշինության նախարարության գլխավոր ճարտարապետին վերապահվում են հետևյալ իրավունքները.

ա) նոր կառուցվող շենքերի վերահսկողությունը

բ) սույն օրենքին անհամապատասխան շենքերի դադարեցումն

գ) սույն օրենքը խախտողին պատասխանատվության ենթարկելը և տուգանելը

դ) հասարակության ապահովության վտանգ սպառնացող շենքերի անմիջապես քանդելն։

Խնամատարության և վերաշինության նախարար՝ ստորագրություն
Գլխավոր ճարտարապետ, ակադեմիկոս՝ ստորագրություն Ա. Թամանյան

— 3 —

## Բացատրագիր*
## Նոր կառուցվող տների առողջության օրենքի մասին

Հոկտեմբերի 28, 1920 թ.

Բնակչության մշտական աճումը Հայաստանի մեծ քաղաքներում (Երևանում, Ալեքսանդրապոլում և Ղարսում) անընդհատ առաջացնում է բնակարանային կրիզիս այդ քաղաքներում, մանավանդ Երևանում։

Վերացնել բնակարանային կրիզիսը միմիայն բնակչության խտացմամբ գոյություն ունեցող բնակարաններում անկարելի է, մանավանդ որ բնակչության աճումը մոտիկ ապագայում կարող է ավելի ևս զարգանալ։ Բնակարանային կրիզիսի դեմ կռվելու հաջող միջոցներից մեկը է բնակելի շենքերի (տների) թիվը ավելացնելը։

Այդ նպատակով ցանկալի է մասնավոր շենքերի կառուցումը խրախուսող օրենքներ հրատարակել։ Խրախուսող միջոցներով մասնավոր շինարարություն առաջ բերելով, միաժամանակ հարկավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որ նոր կառուցվող շենքերը հասարակությանը վտանգ չսպառնան և ապահովեն նրա սանիտարական պայման-պահանջները, որ վաղուց պարտավորեցուցիչ են դառած Եվրոպայի քաղաքների համար։ Նոր կառուցվող

* Վերնագիրը փաստաթղթինն է։

շենքերը մեր երկիր պիտի մուծին նաև քաղաքակրթություն և ճաշակ և հարմարություն։

Ներկայացող օրինագծով նոր կառուցվող շենքերը ազատվում են բռնագրավումներից և պետական ու քաղաքային հարկերի կես մասից։ Բնական է, որ ոչ ոք սիրտ չի անիլ մեծամեծ ծախքեր կատարիլ և տներ շինիլ, եթե ապահով չլինի, որ ազատ է վարվելու իր սեփականության հետ ըստ իր հայեցողության։ Ի նկատի առնելով անօրինակ թանկությունը տների, հարկավոր է նվազեցնել հարկերի չափը (թեկուզ ժամանակավորապես), որպեսզի տների պահպանության ծախքերը գեթ մասամբ պակասին։

Օրենագծում առաջ բերված հիմունքները, որոնցով առաջնորդվելու են շենքեր կառուցելիս, արդարանում են հետևյալ դատողությամբ.

1. Որովհետև օրենագծում հիշված արտոնություններով օգտվում են այն շենքերը, որոնք կառուցվելու են օրենքը հրատարակելուց հետո, պարզ է, որ այդպիսի շենքերի նախագծերը հաստատվելու և ցուցակագրվելու են իշխանության կողմից։ Անհրաժեշտ է, որ նոր կառուցվող շենքերի նախագծերը անպատճառ ներկայացվին ի հաստատություն, որովհետև ուղղումներ մտցնիլ սկսված շենքերի մեջ անկարելի է։ Շենքերի կառուցումն կթույլատրվի, երբ նոցա նախագծերը կհամարվին սահմանված պահանջներին բավարարող։

2. Նախագծերի քննությունը և հաստատումն վերապահվում է խնամատարության և վերաշինության գլխավոր ճարտարապետին իբրև միակ պետական մասնագիտական-շինարարական ինստանցիային։

3. Գծագրերի թիվը և մասշտաբները համաձայնեցրած են ընդունված պահանջներին և հնարավորություն են տալիս միանգամայն պարզ կերպով պատկերացնիլ նախագծվող շենքերը և որոշիլ, թե որքան են համապատասխանում տեխնիկական, սանիտարական և գեղարվեստական պահանջներին։

4. Արգիլումն երեք հարկանի շենքերից բարձր կառուցումների և բնակիլը ներքնահարկերում արդարացվում են առողջապահական, նաև սեյսմիական պայմաններով։

5. Տեխնիկական հսկողության պահանջումն շենքերի վրա իրավասու ճարտարապետների միջոցավ ապահովում են հասարակությանը տների փլումի վտանգից։

6. Վերահսկողության և օրենքի պահանջները խախտող կառուցվող շենքերը դադարեցնելու իրավունքը, բնական է, տրվելու է նախագծերը հաստատող ինստանցիային։

Գլխավոր ճարտարապետ, ակադեմիկոս՝ Ա. Թամանյան։